ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-10/5» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի հունվարի 29-ին կնքված N ՇՀԾՁԲ-10/5-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի հոկտեմբերի 16-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պատվիրատուի մոտ առաջացել է պայմանագրով նախատեսված ծառայությունների լրացուցիչ քանակների ձեռքբերման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և «Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների գնման համար նախատեսված առավելագույն գինը ավելացնել 2 640 000 դրամով, որը չի գերազանցում առավելագույն գնի քսան տոկոսը: Պայմանագրով նախատեսված ծառայությունների առանձին տեսակների միավորի գները թողնվում են առանց փոփոխության: Սույն փոփոխության արդյունքում Պայմանագրի առավելագույն գինը ավելանում է 2 640 000 դրամով և կազմում է 15 840 000 (տասնհինգ միլիոն ութ հարյուր քառասուն հազար) դրամ: Վճարումը կիրականացվի պայմանագրով նախատեսված կարգով, 2014թ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ և ավելացվող քանակները չեն գերազանցում Պայմանագրի գնի 20 տոկոսը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-29-44-99:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀԾՁԲ-10/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 16.10.2014թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և ՌԴ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն **Հ. Ամիրջանովի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 29.01.2014թ. կնքված **N ՇՀԾՁԲ-10/5-1** գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և **«Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման»** ծառայությունների գնման համար նախատեսված առավելագույն գինը ավելացնել 2 640 000 դրամով, որը չի գերազանցում առավելագույն գնի քսան տոկոսը: Պայմանագրով նախատեսված ծառայությունների առանձին տեսակների միավորի գները թողնվում են առանց փոփոխության: Սույն փոփոխության արդյունքում Պայմանագրի առավելագույն գինը ավելանում է **2 640 000** դրամով և կազմում է **15 840 000** (տասնհինգ միլիոն ութ հարյուր քառասուն հազար) դրամ: Վճարումը կիրականցվի պայմանագրով նախատեսված կարգով, 2014թ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	ՌԴ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արարատյան 43/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011117034	Հ/Հ 247120001315
ՀՎՀՀ 02703824	ՀՎՀՀ 00009839
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Հ. ԱՄԻՐՋԱՆՈՎ